և Առաքել Դաւրիժեցին Քէօռ-Օղլուն համարում է ԺԶ. դարու վերջերում ապրող Ջալալի քուրդ իշխան[1]։ Սակայն ով որ կարդացել է Ա. Դաւրիժեցու պատմութեան մէջ Ջալալի քուրդերի, այս մարդ հրէշների, արարմունքը մեր երկրում, դժուար կարողանայ հաւատալ, որ մի այսպիսի հրեշ ցեղի հրեշաւոր իշխանը մի երկրի պատուհաս լինելով հանդերձ՝ նորա ժողովուրդներին սիրելի դիւցազն դառնայ։ Գուցէ կարելի էր կարծել, որ Ջալալիների մէջ էլ եղել է որ և է մէկը Քէօր-Օղլի անունով, ինչպէս որ 1795—1840 թուականը Տրապիզոնի կողմերում[2]։ Բայց երբ Ա. Դաւրիժեցին Քօռ-Օղլու մասին յուսալացնում է. «Որ բաղում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշուղներն եղանակեն» և անմիջապէս յարում. «Գղիր-օղլի Մուստաֆա ըէկ ռ. մարդով (ապստամբեցաւ ի Թագաւորէն). և սա ևս ընկեր է Քօռօղլւոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ», այդ ցոյց է տալիս, որ խօսքը ժողովրդական վէպի դիւցազն Քէօռ-Օղլու մասին է, որ նա շփոթում է մի համանուն ճալալի իշխանի հետ։ Բանի որ Քէօռ-Օղլուն է վերագրւում միջնադարեան ասպետների խօսքը. «Երբ վառօղն երևեցաւ, անձնական քաջութիւնը կորաւ», ուստի նա վառօղի գիւտի ժամանակակից է համարուել, և ուրեմն դիւցազն Քէօռ-Օղլին ԺԶ. դարու վերջերից շատ առաջ էր ապրում։

Արդ մեր այս փոփոխակի ծանօթութեամբ մի այլ մեկնութիւն է տրւում Քուռկիճ Ճալալուն։ «Ճալալ էլ ինչ է.—Ճալաթ, այսինքն Ճալաթ, ամենին տաս ոտքի տակ, զարկես սպանես». ուրեմն ճալաթ նշանակում է ըստ այսմ ջալլաթ, այսինքն դահիճ. մի ժողովրդական անարժէք լեզուաբանական բացատրութիւն, որով այս երկու բառերը պատահական նմանութեամբ կապւում են։ Այսօր էլ ժողովուրդը Գեղարդ ուխտ գնալուց յետոյ՝ ծնած տղայի անունը Գեղամ դնելով իրար է կապում այդ ոչ մի նմանութիւն չունեցող անուններն էլ լոկ պատահական սկզբնական հնչիւնների նոյնութեամբ, որ մեզ յիշեցնում են Խորենացու Արազած, Մասիս և այլ անունների բացատրութիւնները։ Սակայն Ջալաթ կամ Ջալաղ ձևը ունին միայն մի քանի փոփոխակներ, 17 փոփոխակներից ընդամենը երեքը[3]. մինչդեռ մնացեալները,

---

1. Ա. Դաւրիժեցի Պատմ. Է. էջ 87. Վաղարշապատ, 1896։

2. Ս. Հայկունի. Յուսէփցի Ազգատոհմ եւ տարօրինակ աւազակ Աբրիեսմ Տրապիզոնի հայ գիւղերու մէջ. § 7. էջ 35. Վաղարշապատ 1905։

3. «Քուռկէ—Ջալլաթին (№ 3 Ա. փոփոխակ. Գ. էջ 29. 30). Քուռկէ—Ջալաղին» (№ 12. դ. էջ. 66—68. Քուռկէ—Ջալաղ. դ. էջ 72) եւ «Քուրկէջալաթ» կամ «Քուրկէջալաղ» (№ 13 էջ 7—8 (41—42). 12 (46). 22—24 (56—58) եւայլն.